

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՑՈՒՑԱԲԵՐՎԱԾ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովը հիմնել է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման նախագիծը (այսուհետ՝ ՄԱԶԾ)՝ նպատակ ունենալով օժանդակել եւ համալրել ստացող երկրների ջանքերը՝ ուղղված վերջիններիս տնտեսական զարգացման ամենից կարելու հիմնախնդիրների լուծմանը, եւ խրախուսել նրանց սոցիալական առաջընթացը եւ կենսամակարդակի բարձրացումը, եւ

հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ի շահ իր ժողովրդի, ցանկություն է հայտնել դիմել ՄԱԶԾ-ի օժանդակությանը,

վերոհիշյալի հիման վրա Կառավարությունը եւ ՄԱԶԾ-ն (այսուհետ՝ Կողմեր), գործելով բարեկամական համագործակցության ոգով, կնքեցին ներքոհիշյալ Համաձայնագիրը:

ՀՈՂՎԱԾ I. ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն Համաձայնագիրը ներառում է այն հիմնական պայմանները, համաձայն որոնց ՄԱԶԾ-ն եւ նրա կատարող հիմնարկությունները օժանդակություն կցուցաբերեն Կառավարությանը վերջինիս զարգացման ծրագրերի կենսագործման մեջ, եւ համաձայն որոնց ՄԱԶԾ-ի նման օժանդակված ծրագրերը կիրականացվեն: Դրա դրույթները տարածվում են ՄԱԶԾ-ի տրամադրած ցանկացած նմանօրինակ օժանդակության եւ ծրագրի վերաբերյալ այն փաստաթղթերի եւ այլ փաստաթղթերի վրա (այսուհետեւ՝ ծրագրերի վերաբերյալ փաստաթղթեր), որոնք Կողմերը կարող են մշակել՝ նպատակ ունենալով սահմանել այդօրինակ օժանդակության մանրամասները եւ այդօրինակ ծրագրերի նկատմամբ Կողմերի եւ կատարող հիմնարկության պարտավորությունները՝ սույն Համաձայնագրին համապատասխան:

2. Սույն Համաձայնագրով ՄԱԶԾ կողմից օժանդակություն տրամադրվելու է միայն ի պատասխան Կառավարության ներկայացրած եւ ՄԱԶԾ կողմից հաստատված հայցերի: Այդօրինակ օժանդակությունը տրամադրվելու է Կառավարությանը կամ Կառավարության կողմից նշանակված իրավաբանական անձին, այն տրամադրելը եւ ստանալը որոշվելու է ՄԱԶԾ-ի իրավասու մարմինների պատշաճ եւ կիրառելի որոշումներին եւ բանաձեւերին համապատասխան՝ պայմանով, որ ՄԱԶԾ-ի տնօրինության տակ գտնվեն անհրաժեշտ միջոցները:

ՀՈՂՎԱԾ II. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

1. Սույն Համաձայնագրին համապատասխան ՄԱԶԾ կողմից Կառավարությանը տրամադրված օժանդակությունը կարող է ներառել՝

ա) փորձագետ-խորհրդականների եւ խորհրդատուների, ներառյալ՝ խորհրդատվական առանձին ընկերությունների եւ կազմակերպությունների խորհրդատուների, որոնց նշանակում է ՄԱԶԾ-ն կամ համապատասխան կատարող հիմնարկությունը, եւ որոնք պատասխանատու են ՄԱԶԾ-ի առջեւ,

բ) կատարող հիմնարկության կողմից նշանակված օպերատիվ աշխատանքների գծով փորձագետների ծառայությունները, որոնք իրականացնելու են օպերատիվ, գործադիր կամ վարչական բնույթի գործառնություններ՝ որպես Կառավարության կամ Կառավարության կողմից, սույն Համաձայնագրի I-ին հոդվածի 2-րդ պարբերություն համաձայն, նշանակված իրավաբանական մարմինների ծառայողներ,

գ) Միավորված ազգերի կազմակերպության կամավորների ծառայությունները (այսուհետեւ՝ Կամավորներ),

դ) սարքավորում եւ գույք, որ դժվար է ստանալ Հայաստանի Հանրապետությունում

(այսուհետ՝ Երկրում),

ե) սեմինարների, կադրերի վերապատրաստման ծրագրերի, ցուցադրական սախագծերի, փորձագետների աշխատանքային խմբերի եւ առնչվող գործողությունների կազմակերպումը,

զ) ուսանողներին եւ ասպիրանտներին կրթաթոշակներ հատկացնելը կամ նմանատիպ միջոցառումների ֆինանսավորումը, որոնց շրջանակներում Կառավարության կողմից նշանակված եւ համապատասխան կատարող հիմնարկության հավանությունը ստացած թեկնածուները հնարավորություն կունենան ուսուցում կամ մասնագիտական վերապատրաստում ստանալ,

է) Կառավարության եւ ՄԱՉԾ-ի միջեւ փոխհամաձայնեցված օժանդակության ցանկացած այլ տեսակ:

2. Օժանդակության հայցերը Կառավարությունը ՄԱՉԾ-ին պետք է ուղարկի տվյալ երկրում ՄԱՉԾ-ի մշտական ներկայացուցչի միջոցով (տես սույն հոդվածի պարբերություն 4(ա)), համաձայն այդօրինակ հայցերի համար ՄԱՉԾ-ի կողմից սահմանված ընթացակարգի եւ ձևի: Կառավարությունը պարտավորվում է ՄԱՉԾ-ին տրամադրել հայցը գնահատելու համար անհրաժեշտ բոլոր անհրաժեշտ ծառայությունները եւ համապատասխան տեղեկությունը՝ ներառյալ հետագա ներդրումային նպատակաուղղվածություն ունեցող սախագծերի վերահսկողության վերաբերյալ նկատառումների շարադրումը:

3. Օժանդակությունը կարող է ՄԱՉԾ-ի կողմից Կառավարությանը տրամադրվել կամ ուղղակիորեն՝ արտաքին այնպիսի օգնությամբ, ինչը նաեւ հարմար համարվի, կամ էլ կատարող հիմնարկության միջոցով, որի վրա կդրվի ՄԱՉԾ-ի կողմից ծրագրին տրամադրվող օժանդակությունն իրականացնելու հիմնական պատասխանատվությունը, եւ որն այդ նպատակով կստանա անկախ կապալառուի կարգավիճակ: Այն դեպքերում, երբ օժանդակությունը ՄԱՉԾ-ի կողմից ուղղակիորեն Կառավարությանը կտրամադրվի, սույն Համաձայնագրում ցանկացած հղում հիմնարկությանը պետք է մեկնաբանվի որպես հղում ՄԱՉԾ-ին, բացի այն դեպքերից, երբ համատեքստից այլ բան է բխում:

4. ա) ՄԱՉԾ-ին իրավունք է վերապահվում Երկրում մշտական ներկայացուցչի գլխավորությամբ մշտական առաքելություն պահել՝ նպատակ ունենալով այնտեղ ներկայացնել ՄԱՉԾ-ն եւ կատարել Ծրագրի բոլոր հարցերի վերաբերյալ Կառավարության հետ հաղորդակցության հիմնական ուղու գործառույթներ: Մշտական ներկայացուցչին, հանդես գալով ՄԱՉԾ-ի կառավարչի անունից, ստանձնում է լրիվ պատասխանատվություն եւ օժտվում է բարձրագույն լիազորություններով Երկրում ՄԱՉԾ-ի Ծրագրի ընդգրկմամբ եւ վերջինիս բոլոր դրսեւորումներով, ինչպես նաեւ Երկիր գործուղված Միավորված ազգերի կազմակերպության մաս կազմող այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հանդեպ հանդես է գալիս որպես խմբի ղեկավար՝ հաշվի առնելով նրանց մասնագիտական իրավասությունը եւ հարաբերությունները Կառավարության համապատասխան մարմինների հետ: Մշտական ներկայացուցչին Ծրագրի անունից կապեր է պահպանում Կառավարության համապատասխան մարմինների հետ, ներառյալ Կառավարության կողմից արտաքին օժանդակությունը համակարգող գործակալությունը, ինչպես նաեւ իրագեկ է պահում Կառավարությանը ՄԱՉԾ-ի եւ Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան այլ ծրագրերի որդեգրած քաղաքականության, չափանիշների եւ ընթացակարգերի մասին: Խնդրանքի դեպքում նա օժանդակություն է ցուցաբերում Կառավարությանը տվյալ երկրում ՄԱՉԾ-ի Ծրագիրը եւ սախագծերի հայցերը, ինչպես նաեւ տվյալ երկրի սախագիծը, սախագծերը փոփոխությունների ենթարկելու առաջարկությունները նախապատրաստելու գործում, ապահովում է ՄԱՉԾ-ն ներկայացնող զանազան կատարող հիմնարկությունների կամ սեփական խորհրդատուների միջոցով մատուցված օժանդակության ամբողջ ծավալի պատշաճ համակարգումը, ըստ խնդրանքի՝ օգնում է Կառավարությանը՝ համաձայնեցնել ՄԱՉԾ-ի գործունեությունը Երկրում անցկացվող ազգային երկկողմ կամ բազմակողմ ծրագրերին եւ իրականացնում է այնպիսի այլ գործառույթներ, որպիսիք նրան կվստահվեն Կառավարչի կամ կատարող հիմնարկության կողմից:

բ) Երկրում ՄԱՉԾ-ի առաքելությունը ունենում է նաեւ այնպիսի այլ աշխատակազմ, որպիսին ՄԱՉԾ-ն հարկ համարի իր պատշաճ գործունեության համար: Ժամանակ առ ժամանակ ՄԱՉԾ-ն Կառավարությանը տեղեկացնում է առաքելության

անդամների եւ վերջիններիս ընտանիքների անդամների անունները, ինչպես նաեւ՝ այդ անձանց կարգավիճակի փոփոխությունների մասին:

ՀՈԴԿԱԾ III. ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Կառավարությունը պատասխանատու է ՄԱԶԾ-ի օժանդակած զարգացման իր նախագծերի եւ դրանց նպատակների իրականացման համար, ինչպես որ նկարագրված է համապատասխան նախագծային փաստաթղթերում, եւ իրագործում է այդօրինակ նախագծերի այն մասերը, որոնք կարող են իրեն վերապահվել սույն Համաձայնագրի եւ նախագծային փաստաթղթերի դրույթներին համապատասխան: ՄԱԶԾ-ն հանձն է առնում օժանդակել եւ լրացնել Կառավարության մասնակցությունը այդօրինակ նախագծերին՝ Կառավարությանը օժանդակելով իրականացնել իր մտադրությունները Շրագրում հետագա ներդրումների առումով: Կառավարությունը ՄԱԶԾ-ին իրազեկում է ՄԱԶԾ-ի օժանդակած յուրաքանչյուր նախագծով Կառավարության մասնակցության համար ուղղակիորեն պատասխանատու Կառավարության համագործակցող մարմնի անունը: Առանց կանխակալության իր նախագծերում Կառավարության ընդհանուր պատասխանատվության հանդեպ, Կողմերը կարող են համաձայնել, որ որեւէ կատարող հիմնարկություն հիմնական պատասխանատվություն ստանձնի որեւէ ծրագրի իրականացման համար՝ խորհրդակցելով եւ համաձայնելով համագործակցող հիմնարկի հետ: Այս առումով ցանկացած պայմանավորվածություն պետք է հատուկ ամրագրվի նախագծային փաստաթղթերի աշխատանքային պլանի ծրագրի մեջ, որտեղ պետք է տեղ գտնեն նաեւ այն պայմանավորվածությունները, եթե այդպիսիք կան, ըստ որոնց, ծրագրի իրականացման ընթացքում այդ պատասխանատվությունը հանձնվելու է Կառավարությանը կամ Կառավարության նշանակած մեկ այլ մարմնին:

2. ՄԱԶԾ-ի կողմից առանձին մի ծրագրի օժանդակություն ցուցաբերելու համար Կառավարության կողմից նախապես ստանձնած պարտավորությունների կատարումը, որոնց անհրաժեշտության եւ նպատակահարմարության վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերված, նախապայման է հանդիսանում, որ ՄԱԶԾ-ն եւ կատարող հիմնարկությունը կատարեն ծրագրի հետ կապված իրենց պարտավորությունները: Այն դեպքում, եթե այդ օժանդակությունը սկսել է ցուցաբերվել նախքան այդօրինակ նախապես ստանձնած պարտավորությունների կատարումը, այն, ըստ ՄԱԶԾ-ի հայեցողության, կարող է կասեցվել կամ դադարեցվել Կառավարությանը կանխապես ծանուցելով:

3. ՄԱԶԾ-ից օժանդակություն ստացող ծրագրի վերաբերյալ Կառավարության եւ կատարող հիմնարկության միջեւ կամ Կառավարության եւ օպերատիվ աշխատանքների գծով փորձագետի միջեւ ցանկացած համաձայնություն կարգավորվում է սույն Համաձայնագրի դրույթներով:

4. Համագործակցող հիմնարկությունը, ըստ անհրաժեշտության, խորհրդակցելով կատարող հիմնարկության հետ, յուրաքանչյուր ծրագրի համար նշանակում է հաստիքային տնօրեն, որը կատարելու է կատարող հիմնարկության կողմից իրեն վերագրված գործառնությունները: Կատարող հիմնարկությունը, ըստ պատեհության, խորհրդակցելով Կառավարության հետ, նշանակում է գլխավոր տեխնիկական խորհրդատուի կամ ծրագրի համակարգողի, որը կատարող հիմնարկության առջեւ պատասխանատու է ծրագրի մակարդակով վերահսկելու կատարող հիմնարկության մասնակցությունը նախագծում: Նա ուղղորդում եւ համակարգում է փորձագետների եւ կատարող հիմնարկության այլ անձնակազմի գործունեությունը եւ պատասխանատու է Շրագրում մասնակցող Կառավարության ազգային աշխատակիցների՝ առանց արտադրությունից կտրվելու վերապատրաստման համար: Նա պատասխանատու է ՄԱԶԾ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր ներդրումների կառավարման եւ արդյունավետ օգտագործման համար, ներառյալ ծրագրին տրամադրված սարքավորումը:

5. Իրենց պարտականությունների կատարման ընթացքում խորհրդատու-փորձագետները, խորհրդականները եւ կամավորները գործում են Կառավարության եւ Կառավարության կողմից նշանակված անձանց կամ մարմինների հետ սերտ կապի մեջ, եւ պահպանվում են Կառավարության այն հրահանգները, որոնք համապատասխանում են իրենց պարտականությունների էությանը եւ տրամադրվող օժանդակությանը, որոնք փոխհամաձայնեցված են ՄԱԶԾ-ի, համապատասխան կատարող հիմնարկության եւ Կառավարության միջեւ: Օպերատիվ աշխատանքի գծով փորձագետները

բացառապես պատասխանատու են Կառավարությանը կամ այն մարմինն, որի մոտ իրենք գործուղված են եւ ղեկավարվում են նրանց հրահանգներով, սակայն նրանք պարտավոր չեն կատարել գործառնություններ, որոնք համատեղելի չեն նրանց միջազգային կարգավիճակի կամ ՄԱՉԾ-ի կամ կատարող հիմնարկության նպատակների հետ: Կառավարությունը ապահովում է, որ իր մոտ օպերատիվ աշխատանքների գծով յուրաքանչյուր խորհրդատուի ծառայության սկսվելու ժամկետը համընկնի համապատասխան կատարող հիմնարկության հետ վերջինիս պայմանագրի ուժի մեջ մտնելուն:

6. Կրթաթոշակներ ստացող թեկնածուներն ընտրվում են կատարող հիմնարկության կողմից: Նմանօրինակ կրթաթոշակները տրվում են կատարող հիմնարկության՝ կրթաթոշակների հարցում որդեգրած քաղաքականության եւ պրակտիկայի համաձայն:

7. Տեխնիկական եւ այլ սարքավորումը, կյութերը, պիտույքները եւ այլ գույքը, որը ֆինանսավորվել կամ տրամադրվել է ՄԱՉԾ-ի կողմից, պատկանում է ՄԱՉԾ-ին, եթե միայն կամ մինչեւ այն պահը, երբ դրանց սեփականության իրավունքը փոխանցվի Կառավարությանը կամ վերջինիս կողմից նշանակված իրավաբանական մարմին՝ համաձայն Կառավարության եւ ՄԱՉԾ-ի միջեւ փոխհամաձայնեցված կարգի եւ պայմանների:

8. Սույն Համաձայնագրի սահմաններում ՄԱՉԾ-ի տրամադրած օժանդակության հետեւանքով որեւէ հայտնագործության կամ աշխատանքի հանդեպ արտոնագրային իրավունքները, հեղինակային իրավունքները եւ նմանօրինակ այլ իրավունքները պատկանում են ՄԱՉԾ-ին: Սակայն եթե Կողմերի միջեւ ամեն առանձին դեպքում այլ բան չի նախատեսվում, ապա Կառավարությանը իրավունք է վերապահվում Երկրի ներսում անվարձահատույց, առանց հոնորարի եւ նման այլ վճարների օգտագործել ցանկացած այդօրինակ հայտնագործությունները կամ աշխատանքների արդյունքները:

ՅՈՂՎԱԾ IV. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Կառավարությունը ՄԱՉԾ-ին տրամադրում է բոլոր այն զեկուցագրերը, քարտեզները, հաշվապահական ցուցակները, արձանագրությունները, հաշվետվությունները, փաստաթղթերը եւ այլ տեղեկությունները, որոնք վերջինս կպահանջի ՄԱՉԾ-ի օժանդակած նախագծերի առումով՝ կապված դրանց իրականացման կամ շարունակման հավանականության եւ շահութայնության կամ կապված սույն Համաձայնագրի կամ նախագծային փաստաթղթերից բխող՝ Կառավարության ստանձնած պարտավորությունների կատարման հետ:

2. ՄԱՉԾ-ն հանձն է առնում Կառավարությանը իրազեկ պահել սույն Համաձայնագրի շրջանակներում իր կողմից տրամադրվող օժանդակության վերաբերյալ: Յուրաքանչյուր Կողմին իրավունք է վերապահվում ցանկացած պահի դիտել ՄԱՉԾ-ի կողմից օժանդակություն ստացող նախագծերի գործունեության ընթացքը:

3. ՄԱՉԾ-ի կողմից օժանդակություն ստացող ծրագրի ավարտից հետո Կառավարությունը պարտավորվում է ՄԱՉԾ-ին, վերջինիս խնդրանքով, տեղեկություն տրամադրել ծրագրի օգուտների մասին, ինչպես նաեւ հանուն վերջինիս նպատակների հետագա զարգացման ձեռնարկած գործունեության մասին, ներառյալ տեղեկությունը, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է ծրագրի կամ ՄԱՉԾ-ի տրամադրած օժանդակության գնահատման համար: Այս նպատակով Կառավարությունը պարտավորվում է խորհրդակցել ՄԱՉԾ-ի հետ եւ վերջինիս թույլ տալ վերահսկել նման գործունեությունը:

4. Ցանկացած տեղեկություն կամ նյութ, որը, սույն հոդվածի համաձայն, Կառավարությունը պետք է տրամադրի ՄԱՉԾ-ին, Կառավարության կողմից կատարվող հիմնարկությանը տրամադրվում է համապատասխան կատարող հիմնարկության խնդրանքով:

5. Կողմերը խորհրդակցում են միմյանց հետ ՄԱՉԾ-ի կողմից օժանդակություն ստացող ցանկացած ծրագրի կամ դրանից ստացվող օգուտների վերաբերյալ, պատշաճ դեպքերում, ցանկացած տեղեկության հրապարակման շուրջ: Սակայն ներդրումային նպատակաուղղվածություն ունեցող որեւէ ծրագրի վերաբերյալ ցանկացած տեղեկություն ՄԱՉԾ-ի կողմից կարող է տրամադրվել պոտենցիալ ներդրողներին, եթե միայն կամ մինչեւ այն պահը, երբ Կառավարությունը ՄԱՉԾ-ին գրավոր խնդրում է սահմանափակել տեղեկության տրամադրումը այդօրինակ մի ծրագրի վերաբերյալ:

ՀՈՂՎԱԾ V. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

1. Ի կատարումն Կառավարության ստանձնած պատասխանատվության՝ մասնակցել եւ համագործակցել սույն Համաձայնագրի շրջանակներում ՄԱՉԾ-ի կողմից օժանդակություն ստացող նախագծերի իրականացմանը, նա պարտավորվում է տրամադրել հետեւյալ մասնակցությունը համապատասխան նախագծային փաստաթղթերում մանրամասն սահմանված քանակով՝

ա) Ծրագրում մասնակցող տեղական մասնագետների ծառայություններ եւ այլ ծառայություններ, ներառյալ՝ օպերատիվ աշխատանքների գծով փորձագետների հետ համագործակցող տեղական մասնագետների,

բ) հողամաս, շինություններ, կադրերի պատրաստման համար ուսումնական բազա, ինչպես նաեւ Երկրում եղած կամ արտադրվող ենթակառուցվածքային այլ տարրեր,

գ) Երկրում եղած կամ արտադրվող սարքավորումներ, կյութեր եւ պաշարներ:

2. Այն դեպքերում, երբ սարքավորումների մատակարարումը ՄԱՉԾ-ի կողմից Կառավարությանը տրամադրած օժանդակության մաս է կազմում, վերջինս պարտավորվում է ծածկել այդօրինակ սարքավորման հետ կապված մաքսային ձեւակերպումների՝ դրա ժամանման կետից մինչեւ ծրագրի իրականացման վայրը տեղափոխման ծախսերը, ինչպես նաեւ բեռնման եւ պահեստավորման հետ կապված հարակից ծախսերը, ծրագրի իրականացման վայրը հասցնելուց հետո դրա ապահովագրման եւ մոնիտաժման ու պահպանման ծախսերը:

3. Կառավարությունը նաեւ պարտավորվում է վճարել փորձնակների եւ կրթաթոշակ ստացողների նպաստները վերջիններին կրթության ժամկետի ընթացքում:

4. Եթե այդ նախատեսված է նախագծային փաստաթղթում, ապա Կառավարությունը ՄԱՉԾ-ին կամ կատարող հիմնարկությանը կվճարի կամ կկարգադրի իրականացնել պահանջվող այն գումարների վճարումը, որոնք ամրագրված են նախագծային փաստաթղթի բյուջեի նախագծում՝ ուղղված սույն հոդվածի առաջին պարբերության մեջ թվարկված պարագաների մատուցմանը: Կատարող հիմնարկությունն այնուհետեւ կստանա անհրաժեշտ պարագաները եւ տարեկան հաշվետվություն կներկայացնի ՄԱՉԾ-ին սույն կետում նախատեսված վճարումներից իր կատարած ծախսերի վերաբերյալ:

5. Նախորդ պարբերության համաձայն ՄԱՉԾ-ին կատարվելիք դրամական վճարումները կատարվում են այն հաշվին, որն այդ նպատակի համար առանձնացվում է Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի կողմից, եւ դրանց տնօրինումն իրականացվում է ՄԱՉԾ-ի կիրառած ֆինանսական կանոնակարգերին համապատասխան:

6. Նախագծին Կառավարության կողմից տրամադրված ներդրումը կազմող պարագաների արժեքը, ինչպես նաեւ սույն հոդվածին համապատասխան Կառավարության կողմից վճարվելիք բոլոր գումարները, ինչպես դա նշված է նախագծային բյուջեներում, կդիտարկվեն հաշվարկներ՝ հիմնված վերոհիշյալ նախագծային բյուջեների կազմման պահին եղած ընթացիկ տեղեկատվության վրա: Այդօրինակ գումարները բոլոր դեպքերում ենթակա են շտկման, երբ անհրաժեշտ է արտացոլել հետագայում ձեռք բերված ցանկացած այդօրինակ պարագաների փաստացի արժեքը:

7. Կառավարությունը պարտավորվում է նմանօրինակ յուրաքանչյուր ծրագրի իրականացման վայրում համապատասխան ցուցանակներ գետեղել, վերջիններս իրականացվում են ՄԱՉԾ-ի եւ կատարող հիմնարկության օժանդակությամբ:

ՀՈՂՎԱԾ VI. ՏԵՂԱԿԱՆ ԱՐԺՈՒՅԹՈՎ ՎՃԱՐՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՆԱՅՈՒՄՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ

1. Ի հավելումն V հոդվածում նշված մուծման՝ Կառավարությունը պարտավորվում է սատարել ՄԱՉԾ-ին՝ օժանդակություն տրամադրելով վերջինիս եւ վճարելով կամ կարգադրելով իրականացնել վճարումը ներքոհիշյալ տեղական ծախսերի եւ ենթակառուցվածքների դիմաց, համապատասխան նախագծային փաստաթղթերում նշված կամ ՄԱՉԾ-ի կողմից, իր ղեկավար մարմինների համապատասխան որոշումների համաձայն, այլ կերպ որոշված գումարների չափով՝

ա) Երկրի ներսում նախագծերին կցված խորհրդական-փորձագետների եւ խորհրդատուների կեցության տեղական ծախսեր,

բ) տեղական վարչական եւ գրասենյակային ծառայություններ, ներառյալ անհրաժեշտ տեղական քարտուղարական անձնակազմի ծառայությունները, բանավոր եւ գրավոր թարգմանությունը եւ հարակից օժանդակությունը,

գ) Երկրի ներսում անձնակազմի տրանսպորտային ծախսեր,

դ) պաշտոնական նպատակներով փոստային կապ եւ էլեկտրակապ:

2. Կառավարությունը նաեւ պարտավորվում է օպերատիվ աշխատանքի գծով յուրաքանչյուր փորձագետի վճարել անմիջական աշխատավարձ, լրավճարներ եւ նմանատիպ այլ պարգեւատրումներ, որոնք կվճարեր իր քաղաքացուն, եթե վերջինս նշանակված լիներ նման պաշտոնի: Կառավարությունը օպերատիվ աշխատանքի գծով փորձագետին կտրամադրի միեւնույն տարեկան արձակուրդը եւ հիվանդաթերթիկը, ինչպիսիք կատարող հիմնարկությունը տրամադրում է իր աշխատակիցներին, եւ անհրաժեշտ միջոցներ կձեռնարկի, որպեսզի նրան արձակուրդ տրամադրի հայրենիք մեկնելու համար, որի իրավունքը վերապահվում է համապատասխան կատարող հիմնարկության հետ նրա ծառայության պայմաններով: Այն դեպքում, եթե նրա ծառայությունը Կառավարությունը դադարեցնի այնպիսի պատճառներում, որոնք պարտավորեցնում են կատարող հիմնարկությանը, ըստ նրա հետ կնքված պայմանագրի, վերջինիս հատուցում վճարել, Կառավարությունը կմասնակցի դրան այն գումարի չափով, որը սովորաբար վճարվում է տվյալ երկրի քաղաքացի հանդիսացող պետական ծառայողին կամ համարժեք աստիճանով աշխատակցին, եթե նրա ծառայությունը դադարեցվեր միեւնույն հանգամանքներում:

3. Կառավարությունը պարտավորվում է բնեղենով տրամադրել հետեւյալ տեղական ծառայությունները եւ շինությունները՝

ա) անհրաժեշտ ծառայողական եւ այլ շինություններ,

բ) միջազգային անձնակազմի համար այնպիսի բժշկական եւ հիվանդանոցային ծառայություններ, որոնք տրամադրվում են Երկրի քաղաքացի հանդիսացող պետական ծառայողներին,

գ) միջազգային անձնակազմի համար հասարակ, բայց պատշաճ կահավորված բնակարաններ, իսկ օպերատիվ աշխատանքի գծով փորձագետների համար՝ նույն բնակարանային պայմանները, որոնք միեւնույն պարագաներում կհասնեն Երկրի համապատասխան կարգի քաղաքացի հանդիսացող ծառայողներին:

4. Կառավարությունը նաեւ պարտավորվում է մասնակցել Երկրում ՄԱԶԾ-ի առաքելությունը պահելու ծախսերին՝ ամենամյա վճարում կատարելով ՄԱԶԾ-ին մի գումար, որը Կողմերի միջեւ փոխադարձ համաձայնեցվում է հետեւյալ ծախսումները ծածկելու համար՝

ա) համապատասխան ծառայողական շինություններ՝ ապահովված անհրաժեշտ սարքավորմամբ եւ գույքով, որոնք հարմար են Երկրում ՄԱԶԾ-ի տեղական կենտրոնակայան ծառայելու համար,

բ) համապատասխան տեղական գրասենյակային եւ քարտուղարական ծառայություններ, բանավոր եւ գրավոր թարգմանիչներ եւ համանման օժանդակություն,

գ) Երկրի ներսում պաշտոնական նպատակներով մշտական ներկայացուցչի եւ իր աշխատակազմի տրանսպորտային ծախսեր,

դ) ծառայողական նպատակներով փոստային կապ եւ էլեկտրակապ,

ե) Երկրի ներսում պաշտոնական գործուղման դեպքում մշտական ներկայացուցչի եւ իր միջազգայնորեն հավաքագրված աշխատակազմի օրապահիկները:

5. Կառավարությանը ընտրության իրավունք է վերապահվում սույն հոդվածի 4-րդ կետում նշված պարագաները տրամադրել բնեղենով, բացառությամբ "բ" եւ "ե" կետերի:

6. Սույն հոդվածի դրույթների համաձայն վճարման ենթակա դրամական միջոցները, բացառությամբ 2-րդ կետում նախատեսվածների, վճարվում են Կառավարության կողմից եւ ՄԱԶԾ-ի կառավարման տակ են անցնում՝ համաձայն V հոդվածի 5-րդ կետի:

ՅՈՒՐԱԿՐԱՆՈՒԹՅԱՆ VII. ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Այն դեպքում, երբ Կողմերից մեկը որեւէ ծրագրի իրականացման համար օժանդակություն է ստանում այլ աղբյուրներից, Կողմերը պարտավոր են խորհրդակցել միմյանց եւ կատարող հիմնարկության հետ՝ Կառավարության կողմից բոլոր աղբյուրներից ստացված օժանդակության արդյունավետ համակարգման եւ օգտագործման

նպատակով: Սույն Համաձայնագրից բխող՝ Կառավարության ստանձնած պարտավորությունները ենթակա չեն փոփոխման համաձայնագրերով, որոնք նա կարող է կնքել ծրագրի իրականացման գործում իր հետ համագործակցող այլ իրավաբանական անձանց հետ:

ՀՈՂԿԱԾ VIII. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Կառավարությունը պարտավորվում է համակողմանի ջանքեր գործադրել ՄԱԶԾ-ի կողմից տրամադրված օժանդակությունն առավել արդյունավետ օգտագործելու համար եւ այդ օժանդակությունը օգտագործում է այն նպատակով, որի համար այն նախատեսված է: Առանց վնասելու վերը նշվածի ընդհանուր բնույթը, Կառավարությունն այդ նպատակով ընդունում է այնպիսի միջոցներ, որպիսիք ամրագրված են նախագծային փաստաթղթում:

ՀՈՂԿԱԾ IX. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԻԵԼԻՈՒԹՅՈՒՆ

1. Կառավարությունը Միավորված ազգերի կազմակերպության եւ նրա մարմինների, ներառյալ ՄԱԶԾ-ի եւ ՄԱԿ-ի օժանդակ մարմինների, որոնք հանդես են գալիս որպես իրականացնող հիմնարկություններ, ինչպես նաեւ դրանց սեփականության, ֆոնդերի եւ ակտիվների, դրանց աշխատակիցների, ներառյալ մշտական ներկայացուցչի եւ Երկրում ՄԱԶԾ առաքելության այլ անդամների հանդեպ պարտավորվում է կիրառել Միավորված ազգերի կազմակերպության Արտոնությունների եւ անձեռնմխելիության մասին Կոնվենցիայի դրույթները:

2. Կառավարությունը յուրաքանչյուր մասնագիտացված հիմնարկության, որը հանդես է գալիս որպես իրականացնող հիմնարկություն, դրա սեփականության, ֆոնդերի եւ ակտիվների, դրա աշխատակիցների հանդեպ պարտավորվում է կիրառել մասնագիտացված հիմնարկությունների արտոնությունների եւ անձեռնմխելիության մասին Կոնվենցիայի դրույթները, ներառյալ Կոնվենցիայի ցանկացած հավելված, որը կիրառելի է այդօրինակ մասնագիտացված հիմնարկության պարագայում: Այն դեպքերում, երբ որպես մասնագիտացված հիմնարկություն հանդես է գալիս Միջուկային էներգիայի միջազգային գործակալությունը (ՄԱԳԱՏԵ), Կառավարությունը վերջինիս սեփականության, ֆոնդերի եւ ակտիվների, դրա աշխատակիցների եւ փորձագետների հանդեպ պարտավորվում է կիրառել ՄԱԳԱՏԵ-ի արտոնությունների եւ անձեռնմխելիության մասին Համաձայնագրի դրույթները:

3. Երկրում ՄԱԶԾ-ի ներկայացուցչության անդամներին շնորհվում են այնպիսի լրացուցիչ արտոնություններ եւ անձեռնմխելիություն, որպիսիք կարող են անհրաժեշտ լինել ներկայացուցչության կողմից իր գործառույթներն արդյունավետ կատարվելու համար:

4. ա) Երբ կողմերը կոնկրետ նախագծերին վերաբերող նախագծային փաստաթղթերում համաձայնության են եկել, Կառավարությունը բոլոր այն անձանց, բացառությամբ տեղում աշխատանքի ընդունված Կառավարության քաղաքացիների, ովքեր ծառայություն են մատուցում ՄԱԶԾ-ին, մասնագիտացված հիմնարկության կամ ՄԱԳԱՏԵ-ին, որոնք չեն տարածվում 1-ին եւ 2-րդ կետերի դրույթների վրա, շնորհում է նույն արտոնությունները եւ անձեռնմխելիությունը, ՄԱԿԶԾ-ի, համապատասխան մասնագիտացված հիմնարկության կամ ՄԱԳԱՏԵ-ի պաշտոնյաներին, համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Արտոնությունների եւ անձեռնմխելիության մասին Կոնվենցիայի կամ մասնագիտացված հիմնարկությունների արտոնությունների եւ անձեռնմխելիության Կոնվենցիայի եւ կամ ՄԱԳԱՏԵ-ի արտոնությունների եւ անձեռնմխելիության Համաձայնագրի, համապատասխանաբար, 18-րդ եւ 19-րդ բաժիններով:

բ) Սույն հոդվածի նախորդ մասերում նշված արտոնություններին եւ անձեռնմխելիությանը վերաբերող ակտերի իմաստով՝

1) վերը՝ 4-րդ կետի "ա" ենթապարբերության մեջ թվարկված անձանց վերահսկողության ներքո գտնվող բոլոր փաստաթղթերը դիտվում են որպես Միավորված ազգերի կազմակերպությանը, մասնագիտացված հիմնարկությանը կամ ՄԱԳԱՏԵ-ին պատկանող փաստաթղթեր,

2) որոշակի ծրագրի նպատակների համար Երկրի սահմաններում այդ անձանց կողմից ներմուծված, ձեռք բերված կամ վարձակալված սարքավորումը, նյութերը եւ գույքը, ըստ համապատասխան պատկանելության, համարվում են Միավորված ազգերի կազմակերպությանը, մասնագիտացված հիմնարկությանը կամ ՄԱԳԱՏԵ-ին պատկանող՝ կախված հանգամանքներից:

5. Սույն Համաձայնագրի IX, X եւ XIII հոդվածներում օգտագործված "Ծառայություններ մատուցող անձինք" արտահայտությունը ներառում է օպերատիվ աշխատանքի գծով փորձագետներին, կամավորներին, խորհրդատուներին, ինչպես նաեւ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց եւ դրանց աշխատակիցներին: Այն ներառում է կառավարական կամ ոչ կառավարական այն կազմակերպությունները կամ ընկերությունները, ինչպես նաեւ դրանց աշխատակիցներին, որոնց ՄԱՉԾ-ն կարող է վարձել որպես իրականացնող հիմնարկություն, կամ այլ որակով, իրականացնելու կամ օգնելու իրականացնել ՄԱԿԾ-ի կողմից ծրագրին տրամադրվող օժանդակությունը: Սույն Համաձայնագրի մեջ ոչ մի բան չի կարող մեկնաբանվել որպես նմանօրինակ կազմակերպություններին, ընկերություններին կամ դրանց աշխատակիցներին այլ ակտերով շնորհված արտոնությունների, անձեռնմխելիության կամ արտոնությունների սահմանափակում:

ՀՈԴՎԱԾ X. ՄԱԿԾ-Ի ՏՐԱՄԱԴՐԱԾ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՇՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Կառավարությունը պարտավորվում է ցանկացած միջոց նախաձեռնել, որը կարող է անհրաժեշտ լինել ՄԱՉԾ-ին, նրա կատարող հիմնարկություններին, փորձագետներին եւ դրանց անունից ծառայություններ մատուցող այլ անձանց ազատելու համար այն կանոններից եւ այլ իրավական դրույթներից, որոնք կարող են միջամտել սույն Համաձայնագրի ներքո կատարվող գործունեությանը, եւ պարտավորվում է նրանց շնորհել այնպիսի այլ արտոնություններ, ինչպիսիք կարող են անհրաժեշտ լինել ՄԱՉԾ-ի տրամադրած օժանդակության արագ եւ արդյունավետ իրականացման համար: Կառավարությունը, մասնավորապես, պարտավորվում է նրանց շնորհել հետեւյալ իրավունքները եւ արտոնությունները:

- ա) ՄԱՉԾ-ի կամ որեւէ կատարող հիմնարկության անունից ծառայություններ մատուցող փորձագետների եւ այլ անձանց համատեղելիության օպերատիվ ստուգում,
- բ) անհրաժեշտ վիզաների, արտոնագրերի կամ թույլտվությունների արագ, անվճար տրամադրում,
- գ) աշխատատեղի մատչելիություն եւ տեղաշարժման բոլոր անհրաժեշտ պայմաններ,
- դ) ազատ տեղաշարժ Երկրի ներսում, ինչպես նաեւ՝ մեկնում Երկրից եւ ժամանում, երբ դա անհրաժեշտ է ՄԱՉԾ-ի տրամադրած օժանդակության պատշաճ օգտագործման համար,
- ե) արտարժույթի փոխանակման ամենաշահավետ փոխարժեք,
- զ) սարքավորման, նյութերի եւ գույքի ներկրման եւ դրանց հետագա արտահանման համար անհրաժեշտ բոլոր թույլտվություններ,
- է) ՄԱՉԾ-ի եւ դրա կատարող հիմնարկությունների աշխատակիցների, ինչպես նաեւ դրանց անունից ծառայություններ մատուցող այլ անձանց՝ անձնական օգտագործման կամ սպառման համար նախատեսված ինչքի ներկրման եւ դրա հետագա արտահանման համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները,
- ը) վերը՝ "զ" եւ "է" ենթակետերում թվարկված պարագաների արագ մաքսային ձեւակերպում:

2. Քանի որ սույն Համաձայնագրի համաձայն տրամադրվող օժանդակությունը տրվում է ի շահ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ժողովրդի, ապա սույն Համաձայնագրի ներքո իրականացվող գործունեության առնչությամբ ծագող բոլոր ռիսկերը իր վրա է վերցնում Կառավարությունը: Նա պատասխանատու է երրորդ անձանց կողմից ՄԱՉԾ-ին կամ որեւէ կատարող հիմնարկությանը, դրանց աշխատակիցներին կամ նրանց անունից ծառայություններ մատուցող այլ անձանց ներկայացվող հնարավոր բոլոր պահանջները քննելու համար եւ պարտավորվում է նրանց զերծ պահել սույն Համաձայնագրով իրականացվող գործունեության առնչությամբ ծագող պահանջներից կամ

պարտավորություններից: Վերոհիշյալ դրույթը չի կիրառվում այն դեպքերում, երբ Կողմերը եւ կատարող հիմնարկությունը համաձայնում են առ այն, որ պահանջը կամ պարտավորությունը ծագել է որպէս վերոհիշյալ անձանց կողմից թույլ տրված ծայրահեղ անզուլուրջան կամ միտումնավոր գանցանքի հետեւանք:

ՀՈԴՎԱԾ XI. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. ՄԱՉԾ-ին իրավունք է վերապահվում, Կառավարությանը եւ համապատասխան կատարող հիմնարկությանը գրավոր ծանուցելով, ամկախել իր կողմից ցանկացած ծրագրին ցուցաբերող օժանդակությունը, եթէ, ՄԱՉԾ-ի կարծիքով, ծագել են հանգամանքներ, որոնք խոչընդոտում են կամ սպառնում են խոչընդոտել ծրագրի բարեհաջող ավարտին կամ դրա նպատակներին հասնելուն: ՄԱՉԾ-ին իրավունք է վերապահվում միեւնույն կամ դրան հաջորդող գրավոր ծանուցման մեջ շարադրել այն պայմանները, որոնց ներքո նա պատրաստ է վերսկսել իր կողմից ծրագրին ցուցաբերվող օժանդակությունը: Ցանկացած նմանօրինակ ամկախում ուժի մեջ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ վերոհիշյալ պայմանները չեն ընդունվել Կառավարության կողմից, եւ քանի դեռ ՄԱՉԾ-ն Կառավարությանը եւ կատարող հիմնարկությանը գրավոր ծանուցում չի ներկայացրել առ այն, որ պատրաստ է վերսկսել օժանդակության տրամադրումը:

2. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին պարբերությունում հիշատակված ցանկացած իրավիճակ շարունակվում է դրա եւ օգնության ամկախման վերաբերյալ ՄԱՉԾ-ի կողմից Կառավարությանը եւ կատարող հիմնարկությանը ծանուցման ներկայացմանը հաջորդող տասնչորս օրվա ընթացքում, ապա իրավիճակի նման պահպանման ընթացքում ցանկացած պահի ՄԱՉԾ-ին իրավունք է վերապահվում, Կառավարությանը եւ համապատասխան կատարող հիմնարկությանը գրավոր ծանուցելով, դադարեցնել ծրագրին ցուցաբերվող օժանդակությունը:

3. Սույն հոդվածի դրույթները չեն բացառում նմանօրինակ հանգամանքներում ՄԱՉԾ-ի կողմից ցանկացած այլ իրավունքի կամ հատուցման այլ միջոցի դիմելու հնարավորությունը՝ օրենքի ընդհանուր սկզբունքների կամ այլ հիմնավորումների համաձայն:

ՀՈԴՎԱԾ XII. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

1. ՄԱՉԾ-ի եւ Կառավարության միջեւ սույն Համաձայնագրից ծագող ցանկացած վեճ, որը չի կարող կարգավորվել բանակցությունների կամ կարգավորման այլ փոխհամաձայնեցված մեթոդներով, Կողմերից ցանկացածի միջնորդությամբ կարող է հանձնվել իրավարար դատարանի քննության: Յուրաքանչյուր Կողմ նշանակում է մեկ իրավարարի, իսկ երկու իրավարարները նշանակում են երրորդին, որը հանդիսանում է նախագահը: Այն պարագայում, երբ իրավարարության միջնորդությանը հետեւած երեսուն օրվա ընթացքում Կողմերից որեւէ մեկը իրավարար չի նշանակում, կամ երբ երկու իրավարարների նշանակմանը հաջորդած տասնհինգ օրվա ընթացքում երրորդ իրավարարը չի նշանակվում, ցանկացած Կողմի իրավունք է վերապահվում դիմել Միջազգային դատարանի նախագահին՝ իրավարար նշանակելու խնդրանքով: Իրավարար դատաքննության ընթացակարգը սահմանվում է իրավարարների կողմից, իսկ իրավարար դատաքննության ծախսերը կրում են Կողմերը՝ ըստ իրավարարների որոշման: Իրավարար վճիռը պետք է պարունակի այն պատճառաբանության շարադրությունը, որոնց վրա հիմնվում է, եւ պարտադիր է Կողմերի համար՝ որպէս վեճի վերջնական կարգավորող:

2. Կառավարության եւ օպերատիվ աշխատանքի գծով փորձագետի միջեւ ցանկացած վեճ, որը ծագում է Կառավարության մոտ վերջինիս ծառայության պայմանների շուրջ, կարող է հղվել օպերատիվ աշխատանքի գծով փորձագետին ներկայացրած կատարող հիմնարկության կամ Կառավարության կամ օպերատիվ աշխատանքի գծով փորձագետի կողմից: Համապատասխան կատարող հիմնարկությունն իր ծառայություններն է տրամադրում վերջիններիս՝ օգնելու հասնել վեճի կարգավորման: Այն դեպքում, երբ վեճը հնարավոր չէ կարգավորել վերը շարադրվածի համաձայն կամ կարգավորման մեկ այլ փոխհամաձայնեցված մեթոդով, ապա հարցը, ցանկացած Կողմի միջնորդությամբ,

հանձնվում է իրավարար քննության նույն կարգով, որը շարադրված է սույն հոդվածի 1-ին պարբերությունում, բացառությամբ այն հանգամանքի, որ Կողմերից որեւէ մեկի չնշանակած իրավարարի կամ երկու Կողմերի իրավարարների կողմից չնշանակած իրավարարը նշանակվում է Իրավարար մշտական ատյանի գլխավոր քարտուղարի կողմից:

ՅՈՒՐԱԿԱՆՔ XIII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման Կառավարության կողմից եւ ուժի մեջ է մտնում Կառավարության ներկայացրած վավերացման մասին ծանուցումը ՄԱՉԾ-ի ստանալու պահից: Նախքան վավերացումը, այն Կողմերի կողմից ժամանակավոր ուժի մեջ է մտցվում: Այն շարունակում է ուժի մեջ մնալ, քանի դեռ չի դադարեցվել՝ ըստ սույն հոդվածի 3-րդ պարբերության:

2. Սույն Համաձայնագիրը կարող է ենթարկվել փոփոխությունների՝ դրա Կողմերի գրավոր համաձայնությամբ: Գործին վերաբերող բոլոր հարցերը, որոնք նախատեսված չեն սույն Համաձայնագրում, Կողմերի կողմից կարգավորվում են Միավորված ազգերի կազմակերպության պատշաճ մարմինների բանաձեւերին եւ որոշումների դրույթներին համահունչ: Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է լիաժամանակ եւ բարյացակամորեն հաշվի առնել սույն պարբերության ներքո մյուս Կողմի առաջ քաշած ցանկացած առաջարկություն:

3. Սույն Համաձայնագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ մյուս Կողմին գրավոր ծանուցում ներկայացնելով, եւ դրա գործողությունը դադարում է այդօրինակ ծանուցումը ստանալուց վաթսուն օր հետո:

4. Կողմերի կողմից սույն Համաձայնագրի IV (Նախագծերի տեղեկատվության վերաբերյալ) եւ VIII (Օժանդակության օգտագործման վերաբերյալ) հոդվածների համաձայն ստանձնած պարտավորությունները ուժի մեջ են մնում սույն Համաձայնագրի ժամկետը լրանալուց կամ այն դադարելուց հետո: Կառավարության կողմից սույն Համաձայնագրի IX (Արտոնությունների եւ անձեռնմխելիության վերաբերյալ), X (Նախագծերի իրականացման միջոցների վերաբերյալ) եւ XII (Վեճերի կարգավորման վերաբերյալ) հոդվածների համաձայն ստանձնած պարտավորությունները ուժի մեջ են մնում սույն Համաձայնագրի ժամկետը լրանալուց կամ այն դադարելուց հետո՝ այնքանով, որքանով դա անհրաժեշտ կլինի՝ թույլ տալու համար անձնակազմի հետ կանչումը եւ ՄԱՉԾ-ի եւ որեւէ կատարող հիմնարկության կամ նրանց անունից ծառայություններ մատուցող անձանց միջոցների ու սեփականության կանոնակարգված դուրս բերումը:

Ի վկայություն որի՝ ներքոստորագրյալ, համապատասխանաբար, Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի եւ Կառավարության պատշաճ կերպով նշանակված ներկայացուցիչները Կողմերի անունից ստորագրեցին սույն Համաձայնագիրը Երեւանում, 1995 թվականի մարտի 8-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ անգլերեն եւ ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի ապրիլի 11-ից: